Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԱՆԴՐՀԱՄԱՐԴՇԻՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ

ՅԵՎ

ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

3 31. XI

14 SEP 2017

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՏ. 460 (Բ)
ՊԱՏ. 1905. ՏԻՐ. 500

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՄԱՐ

I-28039Ր

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

§ 1.

Սույն հավաքական պայմանագիրը կնքվում ե մեկ կողմից Հայաստանի կառուցող բանվորների անունից Կառուցողների Արհմիության Կենտրոնական Վարչության, որը հետագայում կոչվելու յե «Միություն» հանձինս Կենտվարչության ներկայացուցիչ ընկ. Արմենակ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, մյուս կողմից Անդրհամարդչինի Հայաստանի բաժանմունքի պետի միջեվ հանձինս ընկ. Կ. ՄԻՍԿԱՐՅԱՆԻ, որը հետագայում կոչվելու յե «Անդհամարդչին»:

§ 2.

Սույն հավաքական պայմանագրի նպատակն ե ապահովելու բանվորների առաջ դրված խնդիրների ավելի քան արագ կերպով կատարումը, ժողովրդական տնտեսության վերակառուցման, յերկրի ինդուստրացման եվ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ընթացքում, ու անշեղորեն եվ արագ կերպով բարելավելու կառուցող բանվորների եվ ծառայողների նյութական, կուլտ. կրթական եվ սոց-կենցաղային պայմանները:

§ 3.

Ըստ սույն հավաքական պայմանագրի 2-րդ կետի Անդրհամարդչինի շինարար. աշխատանքներում գրավ—



1/3

ված վարչատնտեսական կողմը, բոլոր ար․ տեխնիկ աշխատավորները և բանվոր-ծառայողները իրենց վրա պարտավորություն են վերցնում լրիվ կերպով կատարելու և գերակատարելու 1931 թ. արտֆինպլաններով նախատեսված քանակային և որակային ցուցանիշները, արտադրության պրոցեսների ճիշտ կազմակերպմամբ, հարվածային աշխատանքների մեթոդի կազմակերպմամբ, պրոլետարական դիսցիպլինայի ամրացմամբ, և ունենալով կոմմունիստական վերաբերմունքը դեպի արտադրությունը, դրա հետ միասին, Անդրհամարդշինի Վարչությունը պարտավորվում է ապահովել անհրաժեշտ արտադրական պայմաններ, այդ խնդիրներն ի կատար ածելու, ինչպես և պարտավոր է անպայման և յուր ժամանակին կատարելու սույն պայմանագրի բոլոր կետերը՝ աշխատավարձի կարգավորման, աշխատանքի իրավական պայմանների վերաբերմամբ, միաժամանակ աջակցելու բարելավելու համար բանվորների կուլտուրական, սոց-կենցաղային և բնակարանային պայմանները:

§ 4.

1931 թ. ընթացքում Վարչությունը պարտավորվում է կիրառել հետևյալ միջոցառումները՝

ա) Տնտեսական տարվա առաջին իսկ ապահովել արտադրության զարգացումը, համաձայն արտֆինպլաններով նախատեսված չափի:

բ) Սույն պայմանագիրը ստորագրելուց (5 օրվա ընթացքում) արտֆինպլանները հասցնել կառուցվող շենքերին և ցեխերին, իսկ 20 օրվա ընթացքում առանձին բրիգադներին և անհատ բանվորներին:

գ) Արտֆինպլանով նախատեսված ռացիոնալացման միջոցները կիրառելու հետ զուգընթաց, Վարչությունը պարտավորվում է տնտեսական տարվա ընթացքում կիրառել նաև այն միջոցառումները, վորպիսիք կառաջարկվեն բանվորների, ԻՏ աշխատավորների և ուրիշների կողմից, վորոնք ոժանդակելու յեն պլանների կատարմանը: Վարչությունը պարտավոր է դրա հետ միաժամանակ առանց հետաձգելու կիրառել կյանքում բանվորների գյուտարարությունները:

դ) Անդրհամարդշինի Վարչությունը պարտավորվում է սույն հավաքական պայմանագիրը ստորագրելուց մեկ ամսվա ընթացքում վորոշել գործադրվող շինանյութերի, հում նյութի, վառելիքի և էլեկտրոէներգիայի չափը ու կազմակերպել ներքին հսկողություն, վորոշված նորմաների կատարման և նյութերի ու կատարված գործերի վորակի ստուգելու համար:

յե) Կազմակերպել պլանային աշխատանք կորուստների դեմ, պայքարելու համար արտադրության մեջ:

զ) 5 օրվա ընթացքում մշակել հրահանգ-տասնապետների, ցեխային վարպետների և նրանց ոգնականների իրավունքների ու պարտականությունների մասին, միանձնյա ղեկավարության սկզբունքը կիրառելու նպատակով, միաժամանակ ուժեղացնել վարչական և տեխնիկական աշխատավորների պատասխանատվությունը, ինչպես շինարարության և գործարանում գրավված բանվորների մեջ, իրենց հանձնարարված աշխատանքները կատարելու հանդեպ:

է) Ապահովել սույն պայմանագրով նախատեսված բոլոր աշխատանքների կատարումը, մասնավորապես աշխատավարձի, աշխպաշտպանության պայմանները և աշխատավորների աշխատանքի պայմանների առողջացման գործը:

ը) Վոչ ուշ ամեն ամսի 25-ից տալ հետևյալ ամսի

արտադրական աշխատանքի պլանը բոլոր ցեխերին, և ամեն մի հնգօրյակի սկսվելուց առաջ նույնը տալ բրիգադներին:

թ) Արտֆինպլանով նախատեսված ռացիոնալացման միջոցների գործադրելու հետ զուգընթաց, անպայման գործադրել նաև այն միջոցները, վորոնք սույն պայմանագրի գործադրելու ընթացքում կառաջարկվեն բանվորների և ճարտարագետա-տեխնիկ աշխատակիցների կողմից և վորոնց առաջարկները հավանության գտած կլինեն Վարչության կողմից:

ծ) Կազմակերպչական և տեխնիկական ոժանդակություն ցույց տալ հետագայում ավելի ևս ծավալելու և ամրացնելու սոց-մրցումը և հարվածայնությունը:

ժա) 3 ամսվա ընթացքում պլանային հետազոտական աշխատանքները կազմակերպել, տեխնիկ. նորմիրովկայի բյուրոյի համար արտադրության ռացիոնալացման, արտադրողականության բարձրացման, և աշխատանքները նորմիրովկայի յենթարկելու նպատակով:

ժբ) Կառավարության նշած ժամանակամիջոցում, մշակել սակագին թվերը և ուղարկել տեղերին վոչ ուշ փետրվարի 1-ից:

ժգ) Վոչ ուշ փետրվարի 1-ից պատվեր ավորների հետ պայման կնքել, համաձայն սակագին թվերի, վորոշել և պատրաստ ունենալ մինչև 15/1 շենքերի համար հատկացված հողամասերը: Պատրաստել նախագծեր և գծագրեր, ինչպես և շինանյութերը, այն հաշվով, վորպեսզի աշխատանքները հնարավոր լինի ծավալել վոչ ուշ մարտ ամսի 1-ը:

ժդ) Ապահովել շինարարական աշխատանքների ամբողջ տարվա ընթացքում, ստեղծել մշտական բանվորական կադր և ուժեղացնել աշխատանքների մեքենայացումը և ստանդարտիզացիա մտցնել շինարարության մեջ, շինարարական ժամանակի ամբողջ ընթացքում ապահովել շինանյութերի անընդհատ մատակարարումը, բանուժի ռացիոնալ ոգտագործումը, ինչպես ներքին միջոցների ոգտագործումը:



ժե) Սոց-մրցման և հարվածայնության հետագա զարգացման համար միջոցներ ստեղծել, առաջին հերթին տալով հարվածայիններին ամենալավ հանրակացարանները և արտադրության մեջ աշխատելու լավ հնարավորությունները:

ժզ) Կատարել ճիշտ և կանոնավոր հաշվառում սոց-մրցման արտադրողականության բարձրացման, ցույցադրելով ստացած եֆեկտները:

ժէ) Հատկացնել պարգևատրման համար ֆոնդ 3000 ռ. և պարգևատրել արժանիներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Վարչությունը պարտավոր է կազմակերպել հարվածային բրիգադներ, այն հաշվով, վոր համապատասխան վարտ-կի խմբեր կազմակերպվեն:

2. Շինարարության հետ ընկած կարևոր միավորներին ոժանդակություն ցույց տալու համար Վարչությունը և բանկոմ-խմբկոմները պարտավոր են կազմակերպել հարվածային բրիգադներ, ավելյալ շինարարության լավագույն հարվածայիններից:

Բանկոմ-խմբկոմները պարտավոր են՝

ա) Վճռական կերպով պայքարել աշխդիսցիպլինան խախտողների, պրոգուլշչիկների, ոսկողականության

և բանուժի հոսունության դեմ, ձեռնարկելով համապատասխան միջոցներ աշխդիսցիպլինան ուժեղացնելու համար:

բ) Պարբերաբար կերպով հսկել արտֆինպլանների կատարման քանակական և վորակական ցուցանիշները, վորի համար յենթարկել մոբիլիզացիայի ձեռնարկության ամբողջ բանվորությանը, սոց-մրցման և հարվածայնության ծավալման և ամրացման, ինչպես և արտադրական խորհրդակցություններ և գյուտարարության միջոցով:

գ) Գործարկոմի և Վարչության հետ միասին կազմել և պարբերաբար ինֆորմացիա տալ բանվորությանը՝ սոցմրցման և հարվածայնության ընթացքի մասին: Գործնական օժանդակություն ցույց տալ Վարչությանը հետամնաց շինարարական մասերին ոգնելու գործում, վերացնելով ֆինպլանների իրագործման խոչընդոտ հանդիսացող բոլոր դժվարությունները:

դ) Կազմակերպել և իրագործել մասսաների հսկողությունը արտադրության մեջ և սույն պայմանագրի համաձայն կողմերին հանձնարարված պարտավորությունների ճիշտ կատարման ձեռք առնել ամեն տեսակի միջոցներ պայմանագիր խախտող կողմերի և անհատների վերաբերմամբ:

Կողմերը պարտավորվում են պլանի կատարմանը վորևե վտանգ սպառնալու դեպքում, միասին ձեռք առնել կոնկրետ միջոցներ արտֆինպլանների կատարման ամեն տեսակի խոչընդոտները վերացնելու և նրա կատարումը ապահովելու համար:

Բանկոմ-խմբկոմները պարտավոր են հարվածային բրիգադներին պարբերաբար հրահանգել և ղեկավարել, ՃՏՍ-ի միջոցով կազմակերպել հարվածայինների և



սոցմրցման մասնակցողների աշխատանքների համար տեխնիկական օժանդակություն:

Կազմակերպել խմբակային արտադրական խորհրդակցություններ և ՃՏ աշխատողների ու Վարչության մասնակցությունն այդ խորհրդակցություններում ապահովել:

ՃՏ աշխատողները իրենց հերթին պարտավոր են ակտիվ կերպով մասնակցել արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին:

ՃՏ բոլոր աշխատակիցները, բանվորները և ծառայողները, վորոնք ավարտել են այս կամ այն վորակավորման դասընթացները, պարտավոր են տվյալ ձեռնարկություններում աշխատել վոչ պակաս 3 տարուց մինչև 5-ամյակի վերջը:

§ 5.

Բանվորները և ծառայողները իրենց հերթին պարտավորվում են՝

ա) Միանգամայն վերացնել առանց հարգելի պատճառների պրոգուլները, լրիվ ոգտագործել բանվորական որը, ձգտել գերակատարելու արտադրական պլանը և լավացնել գործի վորակը:

բ) Կահավորությունը և գործիքները լավ պահպանել, անտեսաբար գործադրել շինանյութերը, թույլ չտալ սահմանված չափից ավելի ծախսել շինանյութերը, հում-նյութը և այլն:

գ) Վարչության կարգադրությունը ժամանակին կատարելով աջակցել միանձնյա ղեկավարության սկզբունքի կիրառմանը:

դ) Իրենց վորակը բարձրացնելու համար պարտավորվում են հաճախել պոլիտեխնիկական դասընթացներ և այլ դպրոցներ:

բ) Մինչեվ տարվա վերջը իրենց ցանկությամբ չթողնել աշխատանքը:

Պայքարել հաճախակի մեկ աշխատանքից այլ աշխատանքների փոխադրվողների դեմ և այդպիսով ապահովել աշխատանքի արտադրողականության 33 տոկոսով բարձրացնելու, ինքնարժեքի իջեցումը 11.5 տոկ. և աշխատավարձի բարձրացումը 4 տոկոսով:

գ) Վերացնել բանվորների մեղքով առաջացած բրակ աշխատանքները և բրակի հետևանքով վերաշինելու յերեվույթը:

§ 6.

Սույն հավաքական պայմանագիրը տարածվում է Անդրհամարդշինի միջոցով Հայաստանում կատարվող բոլոր շինարա. աշխատանքներում և ձեռնարկներում աշխատող բանվորների և ծառայողների վրա, ինչպես և պայմանագրի գործողության ընթացքում նոր ընդունվող աշխատավորների վրա, անկախ նրանց վարձվելու ժամանակամիջոցին:

§ 7.

Սույն հավաքական պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամանակ և ուժի մեջ է մտնում 1931 թ. հունվարի մեկից ու իրեն ուժը պահպանելու յե մինչեվ 1932 թ. հունվարի 1-ը: Այս պայմանագրի ուժի մեջ մտնելու որից սկսած 1929—30 թ. կնքած պայմանագիրը կորցնում է իր ուժը:

§ 8.

Պայմանագրի գործելու ժամանակամիջոցում նրա առանձին կետերը կամ մասերը կարող են փոփոխու-



թյան յենթարկվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Աշխատանքի պայմանները վատթարացնող նոր կետերը հետին թվով չի կարող ընդունվել:

Յեթե մինչեվ սույն պայմանագրի ժամանակամիջոցի լրանալը նոր հավաքական պայմանագիր չի կնքվում, բանվոր-ծառայողների աշխատանքի պայմանները կարգավորվում են սույն պայմանագրով:

Աշխատանքի պայմանների բարելավումը, վոր նախատեսվելու յե պայմանագրի մեջ, ուժի մեջ է մտնելու նրա գործողության առաջին որից:

## ԿԱԴՐԵՐ

§ 9.

Ազատ կամ նոր բացվող պաշտոններում աշխատակիցների ընդունելությունները կատարելու դեպքում, Անդրհամարդշինի Վարչութ. պարտավոր է առաջին հերթին առաջ-քաշել ավելի վորակյալ հարվածայինների, թե բանվորներից և թե ծառայողներից և տվյալ շինարարության մեջ ավելի յերկարատեվ աշխատող բանվորներին:

§ 10.

Բանվորների և ծառայողների ընդունելությունները պետք է կատարվեն միայն Աշխժողկոմատի կադրերի Վարչության կամ նրա տեղական մարմինների միջոցով, վերջիններիս հրաժարվելու դեպքում, վարչությունը իրավունք է վերապահում ընդունելություն կատարել կողմնակի կերպով սակայն յուրաքանչյուր անգամ նոր ընդունվողների հարցը համաձայնեցնելով տեղական պրոֆմարմինների հետ:

## ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ա) Արհմիության անդամները և նրանց հետ հավասարեցվածները:

բ) Հարվածայինների վորդիները, կանայք, քույրերը և յեղբայրները, իսկ վոչ հարվածայիններից նրանց վերոհիշյալ ազգականները, վորոնք վոչ պակաս 3 տարուց աշխատել են Անդրհամար. ձեռնարկություններում: Բացի վերոհիշյալներից Անդրհամարդչինի Վարչությունը պարտավոր է ևս առաջին հերթին ընդունել աշխատանքի ՑԻՏ-ի դպրոց ավարտած և Աշխժողկոմատի կողմից ուղարկված աշակերտներին:

Անկախ Աշխժողկոմատի կարգերի Վարչությունից տեղի բանկոմ-խմբկոմի համաձայնությամբ կարելի յէ ընդունել աշխատանքի սույն պայմանագրին կցված ցուցակում մատնանշված պաշտոնների աշխատակիցներին:

§ 11.

Ամեն մի նոր ընդունվող բանվոր-ծառայողների վերաբերյալ բանկոմին իրավունք է վերապահվում հիմնավորված բացառք հայտարարելու, այդ մասին Վարչությունից հայտարարություն ստանալուց 5-օրյա ընթացքում:

Վարչության կողմից բանկոմի բացառքը չհարգվելու դեպքում գործի քննությունը հանձնվում է ԳԿՀ-ին քննության, վորի վորոշումը պարտադիր է կողմերի համար:

§ 12.

Ճարտ. Տեխնիկ. աշխատավորների ընդունելությունները, վորոնք իրենց ցանկությամբ փոխադրվում են մի այլ ձեռնարկությունից, թույլատրվում է միայն



բանկոմ-խմբկոմի համաձայնությամբ և նախկին աշխատանքի վայրից գրավոր համաձայնության ներկայացնելուց հետո:

§ 13.

Գործի ընդունելու համար փորձնական աշխատանք տալու ժամկետը սահմանվում է՝

ա) Բանվորների համար 6 բանվորական օր.

բ) Գրասենյակային և հաշվային ծառայողների համար մինչև ավագ հաշվետարների ներառյալ 12 բանվորական օր.

տեխնիկ. աշխատավորների համար 24 բանվորական օր:

Ավելի բարձր հաշվային, գրասենյակային, ճարտ.

Այն բանվոր-ծառայողները վորոնք մնում են աշխատանքի փորձնական ժամանակամիջոց անցնելուց հետո մեխանիկորեն համարվում են աշխատանքի ընդունված:

§ 14.

Անդրհամարդչինի բոլոր ձեռնարկներում անչափահաս բանվորի թիվը սահմանվում է աշխատողների 50 տոկոսի սահմանում:

Բրոնիայի թիվը պետք է լրացվի վոչ ուշ սույն 1931 թ. փետրվարի 1-ից, ըստ վորում առաջին հերթին պետք է ընդունել հարվածայինների և Անդրհամարդչինի ձեռնարկներում ավելի յերկար ժամանակ աշխատող բանվորների վորդիներին, նախկին պարտիզաններին, աշխատանքի հերոսների վորդիներին և մանկատան սաներին:

Անդրհամարդչինը պարտավոր է անչափահասներին ընդունելուն պես տրամադրել հանրակացարան և արհեստանոց աշխատելու համար:

Բրիգադային աշակերտության պահելը արգելվում է՝ բացառիկ դեպքերում (Շինուսի և Փաբզավուչի դպրոցներում տեղ լինելու) թույլատրվում է այդպիսին ունենալ:

Բոլոր անչափահասները պետք է տեղավորվեն Շինուսի դպրոցներում սովորելու համար և արգելվում է նրանց սևագործ աշխատանքներում աշխատեցնելը:

§ 15.

Բրիգադային կարգով աշակերտներ ուսուցելու դեպքում Անդրհամարդշինը պարտավոր է սովորող բրիգադաներ նշանակել տեխնիկապես ավելի պատրաստված և վորակյալ բանվորներից:

Բրոնյան կարգով սովորող բոլոր աշակերտությունը պետք է փոխադրվեն Շինուսի դպրոցներում սովորելու համար վոչ ուշ 1931 թ. փետրվարի մեկից:

§ 16.

Անդրհամարդշինը պարտավոր է լրիվ կերպով ապահովել սովորողներին գործիքներով, դասատուների կազմով և բոլոր նյութերով, վորոնք գործադրվելու յեն նրանց արտադրական պրակտիկայի ընթացքում:

Բացի դրանից տրամադրել նրանց համապատասխան կահավորությամբ արհեստանոցի համար շենքեր:

§ 17.

Սովորելու ընթացքում Անդրհամարդշինը պարտավոր է 6 ամիսը մեկ անգամ պարբերաբար վերանայել աշակերտության կարգերը և անցկացնել նրանց ավելի բարձր կարգի, աշակերտներին թույլատրվում է ժամկետից առաջ (6 ամսից շուտ) տալ փորձնական աշխատանք բարձր կարգի անցկացնելու համար:



Այն աշակերտներին, վորոնք ավարտել են ուսումը Վարչությունը պարտավոր է օգտագործել մշտական աշխատանքներում իրենց պահեստի մեջ:

§ 18.

Անդրհամարդշինը պարտավոր է ավարտական տարվա յերկրորդ կեսում աշակերտներին թույլ տալ աշխատելու արտադրության մեջ վորպես ինքնուրույն աշխատողներ, վորոնց արված աշխատանքները կամ հանձնարարությունները պետք է լինեն նրանց ունեցած արտադրական պրակտիկայի սահմաններում, այն հաշվով, վոր նրանց սովորելու վրա վատ չանդրադառնա այս դեպքում նրանք վարձատրվում են չափահասների հետ հավասար չափով ըստ գործարքային աշխատանքների գների, իսկ կրճատված ժամերի համար նրանց վճարվում է տարիֆային դրույքներով աշակերտական ցանցի:

Այն աշակերտները, վորոնք աշխատում են գործարքով աշխատող վարպետների մոտ, վորպես յենթավարպետի, ինչպես և գործարքով աշխատող բրիգադաներում ստանում են և գերարտադրանքի միջին տոկոսը, համաձայն իրենց տարիֆ-կարգերի:

§ 19.

Անդրհամարդշինը պարտավոր է 1931 թ. համար կանտրոլ թվերով բաց թողնված գումարների սահմաններում վերապատրաստել գործազուրկ չափահաս բանվորներին, նրանց Շինուս և Փաբզավուչ դպրոցներում ընդունելու համար:

§ 20.

Անդրհամարդշինը պարտավոր է 1931 թ. արտֆինպլաններով կադրերի պատրաստման համար նախատես-

նրված աշխատավարձի 3% (յերեք տոկոս) գումարի հաշվին մինչև 1-ը փետրվարի ս. թ. կազմակերպել դասընթացքներ 100 բանվորների վորակը բարձրացնելու համար, ապահովելով դասընթացքները դասատուներով և այլն. Ծառ. Տեխնիկ. աշխատավորների վորակավորման դասընթացքներ 2 հոգու համար, մնացած գումարով ( ) Վարչությունը պարտավորվում է վոչ ուշ մինչև 15-ն մարտի համաձայնության գալով տեղական ՃՏՍ-ի հետ, ձեռք բերել տեխնիկական գիտելիքների վերաբերող գրականություն, գրադարանը անհրաժեշտ գրքերով լրացնելու համար:

§ 21.

Այն շենքերի վրա, ուր աշխատում են 200-ից պակաս սեզոնը յերկարատև բանվորներ, և յեթե շենքի ավարտելը կտևի մեկ տարուց ավել, այդ դեպքում Անդրհամարդշինը պարտավոր է կազմակերպել մի տարվա տևողությամբ դասընթացներ այդ յերկարատևությանը վորակավորելու համար:

Բացի դրանից Անդրհամարդշինը պարտ. է դասընթացքների համար տրամադրելու շենք անհրաժեշտ կահավորությամբ, ինչպես և հոգալ դասատուների ծախսը:

Այդ դասընթացքներ ավարտողներին պետք է հանձնարարել ավելի բարձր վորակի աշխատանք համաձայն նրանց վորակի:

Անդրհամարդշինը պարտ. է սովորողներին ամսական 10 ժամ ազատել աշխատանքներից թեորետիկ և պրակտիկ պարապմունքների համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ազատման ժամերը պետք է այնպես դասավորել, վորպեսզի չանդրադառնա աշխատանքների նորմալ ընթացքի վրա:



§ 22.

Վորակը բարձրացնելու համար սովորող բանվորներին աշխատավարձը վճարվելու յե հետևյալ կարգով՝

ա) Տվյալ ձեռնարկության սեզոնը բանվորներին և կիսավորակ բանվորներին, վորոնք վորակավորման և վերավորակավորման նպատակով ազատված են աշխատանքներից վորոշ ժամերով, նրանց աշխատավարձը տրվելու յե գործարքի գնացուցակներով, սակայն վոչ պակաս նրանց տարիֆային դրույքից, վորը վերադասվելուց հետո պետք է ստանան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կենտրոնական Աշխ. Ինստիտուտի (ՑԻՏ) կուրսեր ավարտող բանվորները գործարքային աշխատանքների դեպքում յեթե չեն արդարացնում իրենց տարիֆային դրույքները մինչև յերկու ամիս պետք է վարձատրվեն իրենց տարիֆ-դրույքներով, հետագայում նույնպես չարդարացնելու դեպքում վարձատրվելու յեն տարիֆ-դրույքի $^2/_3$-ից:

1-28039գր

§ 23.

Վորակավորման դասընթացքները ավարտած ծառ.-տեխնիկ աշխատավորները-ծառայողները, ինչպես և այն աշակերտները, վորոնք սովորել են շինություններում, պարտավոր են աշխատել Անդրհամարդշինի ձեռնարկներում վոչ պակաս մինչև 5-ամյակի վերջը:

§ 24.

Գործարքի [illegible] այն բանվորները, վորոնք իրենց [illegible] աշխատանքների հետ զուգընթաց [illegible] հատատական կարգով աշակերտներ են ուսուցանում Անդրհամարդշինը պարտավոր

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐ

և այդպիսիներին լրացուցիչ կերպով վարձատրել մինչ պակաս սովորող աշակերտների ամսեկան աշխատավարձի 15%-ից:

Յեթե աշակերտների ուսուցումը կատարվում է ամբողջ բրիգադայի միջոցով, ապա բրիգադայում յեղած բոլոր վորակյալ բանվորներին սկսած 4-րդ կարգից, տրվում է լրացուցիչ վարձատրություն սովորող բոլոր աշակերտների ամսեկան աշխատավարձի գումարի 15 տոկոսի չափով—վերջինը գումարը բաժանվում է բրիգադայում աշխատող վորակյալ բանվորների միջև ըստ նրանց տարիֆ-կարգերի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1. Նույն կարգով վարձատրվում են այն բանվորները, վորոնց ղեկավարությամբ սովորում են չափահաս բանվորները.

2. Անդրհամարդչինը պարտավոր է Շինուսի աշակերտությանը տրամադրել կահավորված ճաշարան, և բուֆետ, իսկ շինուսի անչափահաս աշակերտների համար կազմակերպել առանձին ճաշարան, նրանց տաք նախաճաշ տալու համար պետք է վճարվի Անդրհամարդչինի հաշվին:

§ 25.

Անդրհամարդչինը պարտավոր է 60 հոգի բանվորների ուղարկել (իր հաշվին) բրիգադաների և տասնապետների դասընթացներ, վորոնց ավարտելուց հետո շինարարության մեջ տալ արտադրական պրակտիկայի տեղ կամ աշխատանք: Բացի այդ Վարչությունը պարտավոր է ուղարկել տասնապետներից և բրիգադաներից տեխնիկական կուրսեր տեխնիկ. դառնալու համար 15 հոգու: Տեխն. ճարտարապետական կուրսեր 5 հոգի:



§ 26.

Վարչությունը պարտավոր է արտելների փոխարեն կազմակերպել ցեխային բրիգադաներ և նշանակել բրիգադիրներ հարվածային և լավագույն արտադրական բանվորներից և գյուղատարաներից:

Բրիգադիրը պարտավոր է բրիգադայի հետ հավասար աշխատել և ստանալ աշխատավարձ բրիգադայի միջին աշխատավարձի չափով ըստ իրեն տարիֆային կարգի:

Ազատ բրիգադիր ունենալը թույլատրվում է բրիգադայի կազմի 40 հոգուց ավելի լինելու դեպքում, ապա բրիգադիրը վարձատրվելու յե Անդրհամարդչինի հաշվին կրտսեր տասնապետի դրույքով, սակայն վոչ պակաս իր նախկին միջին աշխատավարձից:

Անդրհամարդչինը պարտավոր է հատուկ դասընթացների միջոցով պատրաստել բրիգադիրների կադր:

§ 27.

Համաձայն Համամիութենական Աշխատողկոմատի, ԺՏԽ-ի հաղորդակցության ժողկոմատի և Կոոպերացիաների Միության Կենտկոմի 1930 թ. № 349-29 նոյեմբերի շրջաբերականի, Անդրհամարդչինը պարտավոր է ինքնամբացման յենթարկել շինարարության վրա աշխատողներին: Անդրհամարդչինը պարտավոր է իր բնակության վայրը վերադարձող բանվորներին վճարել ճանապարհածախս, յեթե ճանապարհը 1000 կիլոմետրից ավել է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Ճանապարհածախսի վճարման վերաբերյալ բանվորների և Անդրհամարդչինի միջև առանձին պայմանագիր լինելու դեպ-

քում, ճանապարհածախսը վճարվում է ըստ նրանց մեջն եղած պայմանագրի:

2. Ցեխի ինքնամրցման պայմանագիր կնքող բանվորը հեռանում է աշխատանքից պայմանաժամից շուտ իր կամքով, կամ հեռացվում է աշխատանքից ներքին կարգապահության կանոնները խախտելու համար, ԳԿՀ-ի որոշման հիման վրա Անդրհամարդշինը կարող է բանվորին վճարելիք աշխատավարձից պահել նրան վճարած ճանապարհածախսը:

§ 28.

Բանվոր-ծառայողների կրճատումը նախորոք պետք է համաձայնեցվի բանկոմ-խմբկոմների հետ:

Աշակերտները կրճատման ենթակա չեն այլ փոխադրվում են ուրիշ աշխատանքներում աշխատելու համար:

Հաստիքի կամ աշխատանքների կրճատման դեպքում աշխատանքներում մնալու նախապատվությունը տրվում է՝

ա) Արհմիության անդամներին.

բ) 1931 թ. զինակոչի ենթականերին.

գ) Հարվածային բանվոր-ծառայողներին, ինչպես և երկար ժամանակ Անդրհամարդշինի ձեռնարկներում աշխատողներին, որոնք նկատողության կամ տուգանքի չեն ենթարկված աշխ-դիսցիպլինան կամ ներքին կարգապահության կանոնները խախտելու համար:

դ) Արտադրական կոմմունաների անդամներին.

ե) Քաղաքի բանվորների, որոնք գյուղական եկամուտներով չեն ապրում.



զ) ՑԻՏ-ի, Շինուսի և Ցերիտ-բանվորության դըպրոցների ավարտողներին.

է) Ինքնամրցման պայմանագրերը կնքողներին:

§ 29.

Աշխատանքից հեռացող այն բանվորները, որը համաձայն չի Վարչության կողմից առաջարկած ցածր աշխատանքի անցնելուն, մինչև նրանց հեռացնելը Վարչությունը պարտավոր է իրազեկ դարձնել բանկոմին կամ խմբկոմին, խմբկոմի կողմից առարկություն լինելու դեպքում հեռացման խնդիրը հանձնվելու է ԳԿՀ-ի քննության:

Ժամանակավորապես աշխատունակությունը կորցրած աշխատավորներին, աշխատանքից արձակելը թույլատրվում է միայն 4 ամսից ավել գործի չհաճախելու դեպքում, (չհաշված հղիությունն և արձակուրդ):

Աշխատանքի ընթացքում պատահած դժբախտ պատահարների հետևանքով ժամանակավորապես աշխատունակությունը կորցրած բանվոր ծառայողին արգելվում է աշխատանքից հեռացնել մինչև նրա առողջանալը, կամ բժշկական հանձնաժողովի կողմից անաշխատունակության աստիճանին որոշելը:

§ 30.

Շինարարության վրա աշխատող այն բանվոր-ծառայողները, որոնք համաձայն Աշխօրենսգրքի 47-րդ հոդվածի «Ա», «Բ» կետերի կհեռացվեն աշխատանքից, Վարչությունը պարտավոր է հեռացնելուց առաջ նախազգուշացնել հետևյալ կարգով՝

Մի ամսից պակաս աշխատողին 1 օր առաջ:

Մինչև 6 ամսի աշխատողների 7 օր առաջ:

6 և 6-ից ավել աշխատողներին 15 օր առաջ:

Հեռացվողներին հեռացման մասին Վարչությունը պարտավոր ե նախազգուշացնել գրավոր կերպով, վերցնելով նրանից ստորագրություն, բացի այդ նաև նշանակել հաշվեգրքույկներում հեռացման ժամկետը:

§ 31.

Վարչության կարգադրությամբ կամ աշխատանքների կրճատման հետևանքով աշխատանքից կրճատվող բանվորներին վերջնական հաշիվները (օրավարձու) հաշիվները պետք ե փակել վոչ ուշ կրճատման հետևյալ օրից, իսկ գործարքով աշխատողների վերջնական հաշիվները փակել կրճատման օրից սկսած 3 օրվա ընթացքում:

Բանվորի արձակման օր համարվում ե նրանց հետ վերջնական հաշիվների փակման օրը, յեթե բանվորներին հասանելիք բոլոր տեսակի գումարները վերևում ընդունված ժամանակամիջոցում չվճարվի, բանվորը համարվում ե աշխատանքի մեջ և սպասած բոլոր օրերի համար վարձատրվելու յե տարիֆային դրույքներով:

§ 32.

Յեթե բրիգադայում աշխատողների 50%-ը և ավելին իրենց ցանկությամբ հեռանում են աշխատանքից դեռ գործը չվերջացրած, նրանց վճարվում ե տարիֆային դրույքներով, իսկ վերջնական հաշիվները նրանց հետ պետք ե փակել ամբողջ աշխատանքները ավարտելու կամ ամբողջ բրիգադան լուծարքի յենթարկելու համար:

Յեթե հեռացողները հեռանում են նաև այլ աշխատանքի վայրից Անդրհամարդշինը պարտավոր ե նր-



րանց վերջնական հաշիվները իրենց հաշվով փոխադրել բանվորներին թողնված հասցեների համաձայն:

Յեթե Վարչության կարգադրությամբ բրիգադայի մի մասը հեռացվում ե աշխատանքից համաձայն Աշխ. օրենսգրքի 47-րդ հոդվածի Ա և Բ կետերի, Վարչությունը պարտավոր ե չափել և հաշվել կատարված աշխատանքները, վճարելով նրանց բոլոր տեսակի հասանելիք գումարները, կամ համաձայն սույն պայմանագրի § 34-ի մինչև վերջնական հաշիվները ստանալը սպասած օրերի աշխատավարձը վճարել միջին աշխատավարձի չափով:

§ 33.

Այն բանվոր-ծառայողները, վորոնք իրենց ցանկությամբ հեռանում են գործից, պարտավոր են այդ մասին Վարչությանը նախազգուշացնել 12 օր առաջ: Նախազգուշացումը կատարվելու յե վորոշ օրերում, վորպիսի օրերը վորոշվում ե բանկոմի և Վարչության փոխադարձ համաձայնությամբ:

Այն բանվորները, վորոնք 12 օր առաջ հեռանալու մասին Վարչությանը չեն նախազգուշացրել, նրանց վերջնական հաշիվների վճարումը կատարվելու յե հերթական աշխատավարձի վճարման օրը:

## ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 34.

Վարչությունն իրավունք չունի պահանջել աշխատավորից այնպիսի աշխատանք, վորը չի վերաբերվում նրա արհեստին, յեթե աշխատավորին փոխադրում են իր արհեստին բոլորովին անհամապատասխան գործի, վոչ

էր վորակի համաձայն, այդ դեպքում նա կարող է ստանալ լուծարքային նպաստ և ազատվել աշխատանքից:

§ 35.

Գործարքով աշխատող այն բանվորները, վորոնք իրենց աշխատանքները դեռ չավարտած կփոխադրվեն որավարձային աշխատանքի (մանր աշխատանքներ կատարելու համար) մինչև նախկին գործարքային աշխատանքի վերադառնալը որավարձային աշխատանքներում յեղած ժամանակամիջոցի համար, դարձատրվելու յեն գործարքային աշխատանքներում ունեցած աշխատավարձի չափով:

§ 36.

Յեթե բանվոր-ծառայողներին շինարարական վորևէ տեղից փոխադրում են մի ուրիշ վայր աշխատելու, Անդրհամարդշինը պարտավոր է վճարել նրանց փոխադրական ծախսերը և փոխադրության ժամանակ կորցված որերի աշխատավարձը միջին աշխատավարձի հաշվով:

Յեթե բանվորն աշխատել է փոխադրված վերջին վայրում 5 ամսից ավելի նրան պետք է վճարել նաև վերադարձի ճանապարհածախսը մինչև իր բնակավայրը:

§ 37.

Շինարարական այն ձեռնարկներում ու վայրերում ուր աշխատում են 1000 հոգուց ավելի բանվոր-ծառայողներ, Անդրհամարդշինը պարտավորվում է այդպիսի ձեռնարկներում պահելու մեկ ազատված պատասխանատու աշխատակից, վորը հատկապես պետք է զբաղվի ցեխից մի այլ ցեխ փոխադրելու գործով և այլն, վորի թեկնածությունը նախորոք պետք է համաձայնեցնել բանկոմ-խմբկոմի հետ:



# ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՅԵՎ ԱՐՏԱԴՐՈՒՆՔԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

§ 38.

Բոլոր գործերում կիրառվելու յեն ուղղակի գործարքային աշխատանքի ձևը, առանց դերարտադրանքի սահմանափակման, որավարձային աշխատանք թույլատրվում է միայն նորմիրովկայի չյենթարկվող աշխատանքներում:

Ակկորդային աշխատանքները թույլատրվում է բացառիկ դեպքերում այն էլ Միության գիտությամբ և համաձայնությամբ:

§ 39.

Անդրհամարդշինը պարտավոր է սույն պայմանագիրը ստորագրելուց մեկ ամսվա ընթացքում մշակել և համաձայնեցնել Միության հետ պարգևատրումների ձևը և կարգը, ինչպես գործարքով այնպես էլ այն աշխատանքների համար, վորոնք չեն յենթարկվում նորմիրովկայի, պարգևատրումները կատարվում են հետևյալ դեպքերում, յերբ նկատվում է արտադրության վորակի բարձրացում, բրակի իջեցում, նյութերի և հում-նյութերի խնայողաբար գործադրում, պրոստոյների տոկոսների իջեցում, տրված աշխատանքների լավագույն կատարման ցուցանիշների և այլն:

§ 40.

Առանձին աշխատանքների վարձատրությունը կատարվում է միության հետ համաձայնեցրված, միացյալ գնացուցակների համաձայն, վորպիսի գնացուցակը պարտավոր է աշխատանքների նորմալ պայմաններում և համապատասխան վորակի շինանյութեր ունենալու

դեպքում: Գնացուցակներից վոչ հարգելի պատճառներով շեղումներ կատարելը արգելվում է:

§ 41.

Մեխանիկական նորմաներով նախատեսված արտադրության պայմանների բացակայության դեպքում, յերբ հնարավոր չե գնահատել աշխատանքը կամ փոխել աշխատանքի այն պայմանները, վորոնք ազդում են աշխատանքի վրա ցածրացնելով այն գնահատությունը կատարվելու յե ԳԿՀ-ի կողմից:

ԳԿՀ-ն քննության է առնում և գնահատում է նաև այն աշխատանքները, յերբ ձեռնարկության մեջ իբրև նորություն է կիրառվում և ստեղծում է աշխատանքի հատուկ պայմաններ՝ օրինակ, ռացիոնալացում, այս կամ այն գործի, կազմակերպչական-տեխնիկական բարելավումը և այլն, վորոնք բանվորի աշխատավարձը բարձրացնելու յեն:

Բոլոր նման դեպքերում Անդրհամարդչինը պետք է ստուգի գնացուցակում կատարված բոլոր փոփոխությունները, իսկ ԳԿՀ-ն իր հերթին պետք է արձանագրի այն պատճառները, վորոնց հետևանքով կատարվել է գնացուցակների իջեցում կամ ավելացում:

ԳԿՀ-ի կատարած գնացուցակի փոփոխությունները կարող են տարածվել նաև բոլոր այն շինարարությունների վրա, յեթե ԳԿՀ-ն կազմած լինի միջ-գերատեսչական կարգով (ամեն մեծ շինարարության ներկայացուցչի մասնակցությամբ) և միության ներկայացուցչի մասնակցությամբ:

Աշխատանքներում առաջացած բոլոր աննորմալությունների մասին բանվորները պարտավոր են հայտնել



Վարչությանը, վերջինս այդ մասին կազմելու յե արձանագրություն:

§ 42.

Անդրհամարդչինը և Միությունը հավասար չափով պատասխանատու յեն այն գնացուցակների ճիշտ կիրառման և շեղումների համար, վորոնք կազմում են շինարարության և շինանյութեր արտադրող ձեռնարկությունների համար:

Միութենական կազմակերպությունները սույն պայմանագրի համաձայն պարտավոր են իրենց վրա վերցնել պայմանագրի ճիշտ կիրառման պարբերաբար հսկողությունը, գնացուցակների կիրառումը գործարաններում և շինարարություններում, տանել բացատրական աշխատանքներ բանվորական մասսաների մեջ գնացուցակների նշանակության մասին և տեխնիկական նորմիրովկայի կատարած դերի ու դիսցիպլինայի մասին:

Կենտրոնացնել բանվորների ուշադրությունը և ուժանդակությունը տեխնիկական նորմիրովկայի գործն ավելի ուժեղացնելու, ձեռնահաս և համապատասխան բանվորների առաջ քաշումը, հատկապես հարվածայիններին, լրացնելու տեխ. նորմիրովկայի աշխատողների թիվը, իր ժամանակին տեղեկացնել վերադաս մարմիններին և Աշխժողկոմատին Վարչության պատճառով տեղի ունեցած գնացուցակների խախտումների մասին և միջոցներ ձեռք առնել գնացուցակների դիսցիպլինան ամուր հիմքերի վրա դնելու:

Աշխատանքի արտադրողականության լրիվ հաշվետվությունը պահանջել շինարարական օրգաններից,

ապահովել հսկողությունը և իր ստանդարտության այդ խնդրում:

Ձեռք առնել միջոցներ—անմիջապես կանխելու շի-նարարության մեջ առաջացած ընդմիջումները, որոնք կասեցնում են արտադրության ընթացքը, աշխատանքի բոլոր բնագավառներում:

Միաժամանակ անհրաժեշտ է պարբերաբար ու-սումնասիրել աշխատավարձի սահմանված նորմաները և ուսումնասիրության արդյունքները օգտագործել, հե-տագայում աշխատանքի խնդիրները կարգավորելու համար:

§ 43.

Աշխատանքների միացյալ գնացուցակներում չնախա-տեսված աշխատանքի գները մշակվում են Անդրհա-մարդչինի կողմից, ելնելով տվյալ աշխատանքների կարգի բանվորների միջին աշխատավարձից և արտա-դրանքի նորմաներից:

Համամիութենական միասնական նորմաներում չը-նախատեսված արտադրական նորմաները (նորմա վը-բարտակի) և նրանց կարգը սահմանվում են ըստ աշ-խատանքների բնույթի և վոչ թե աշխատանքի կատարող անձի կարգի, նորմաների չափը սահմանվում են լավա-գույն բանվորների արտադրանքի հիման վրա, կատարած խրոնոմետրաժի տվյալներով:

§ 44.

Եթե աշխատանքի գոյություն ունեցող պայման-ները, այնպես են դասավորված, որ ամենալավ բան-վորը ինտենսիվ աշխատելու դեպքում չի կարողանում արտագացնել աշխատավարձի սահմանված նորման, այդ



դեպքում նորմաները չեն փոփոխվում, այլ ԳԿՀ–ի վո-րոշմամբ բարձրացվում է գները: Բարձրացված գնա-ցուցակները պահպանվում են իրենց գոյությունը, այն-քան ժամանակ, որքան ժամանակ շարունակվի հիշված առանձնահատուկ պայմանները: Գնացուցակները ամեն մի նման բարձրացում պետք է կատարել տեղում, նա-խորոք հարցը քննելուց հետո: Եթե աշխատանքի պայ-մանները նորմալ են և բանվորը չի կարողանում արդա-րացնել իր նորման, այդ դեպքում գնացուցակների բարձրացում չի կատարվում:

Եթե աշխատանքի տեխնիկական կազմակերպչա-կան պայմանները բարեփոխվում են և աշխատանքի ար-տադրողականությունը սկսում է բարձրանալ անկախ բանվորի աշխատանքի պայմաններից, աշխատավարձի պայմանները և նորմաները վերամշակվում են ԳԿՀ–ի միջոցով 6 ամսվա ընթացքում, իսկ առանձին բարդու-թյունների դեպքում, 12 ամսվա ընթացքում:

§ 45.

Եթե բանվորի ձեռներեցությամբ որևէ աշխա-տանքի մեջ բարեփոխություն է մտնում, որով բարձ-րանում է արտադրողականությունը, գնացուցակի նոր-ման այդ բանվորի վերաբերմամբ յենթարկվում է փո-փոխության և տրվում է բանվորին բացի փոխհատու-ցումից, նաև վերջին յերեք ամիսների համար նոր գնա-ցուցակի տարբերությունը, անկախ նրանից, թե տվյալ բանվորը անհատապես թե բրիգադայի մեջ է աշխա-տում:

§ 46.

Այն դեպքում, յեթե աշխատանքները կատարվում են կոլլեկտիվ կերպով (հարվածային բրիգադաներ, ար-

տադրական կոլեկտիվներ և այլն) վարձատրության ընդհանուր նորմաները, փոխվելու յեն ամեն դեպքում աշխատանքի բնույթի և կատարման մասերի համաձայն հայտարարելով այդ մասին բանվորներին:

§ 47.

Հարմարություններ ստեղծելու, աշխատավայրը կահավորելու և գործիքներ պատրաստելու համար կորցրած ժամանակի և աշխատանքի վարձատրությունը, (Վարչության գիտությամբ և կարգադրությամբ) հաշվելու յե առանձին, անկախ գործարքից իբրև ինքնուրույն աշխատանքի համաձայն միջին աշխատավարձի:

§ 48.

Նորմաների և գնացուցակների առթիվ Վարչության և բանվորների մեջ հարուցված կոնֆլիկտները լուծվելու յեն ԳԿՀ-ի կողմից մինչև կոնֆլիկտներ լուծվելը, բանվորները իրավունք չունեն հրաժարվելու աշխատանքից, յեթե նույնիսկ նրանք համաձայն ել չլինեն տվյալ գնացուցակով աշխատելու:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն աշխատանքների վարձատրությունը, վորի հիմունքով բանվորը կատարել ե վարձատրության մասին կոնֆլիկտ հարուցելու ժամանակամիջոցում, ԳԿՀ-ի դիմում տալու որից, վճարվելու յեն նրան համաձայն ԳԿՀ-ի վորոշման, սակայն վոչ պակաս նման գործը հանձնելու որը պայմանավորվածից:

ԳԿՀ-ի վորոշումից հետո, նույնպես աշխատանքը վարձատրվելու յե համաձայն ԳԿՀ-ի վորոշման, թեկուզ այդ վորոշումը ավելի ցածր վարձ հանի բանվորին, քան թե Վարչությունն ե սահմանել աշխատանքը հանձնելիս:



§ 19.

Գործարքով աշխատանք բանվորին հանձնելու դեպքում, Վարչությունը պարտավոր ե նախորոք բացատրել գործի բնույթը, չափը, գնահատությունը և աշխատանքի ժամանակի տևողությունը, վորպիսիք պահանջում ե գործը:

Յեթե տրված աշխատանքի գները գնացուցակով նախատեսված չեն յեղել, գները վորոշվելու յեն ԳԿՀ-ի կողմից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բանվորները իրավունք չունեն հրաժարվելու տրված գործից, սակայն այդ հանգամանքը չի արգելում նրանց բողոքել ԳԿՀ-ի վորոշման դեմ:

§ 50.

Կառուցողների Արհմիության Կենտկոմի մշակած տարիֆային սանդղակի համաձայն, պետք ե վորոշել բանվորի կատեգորիան, թե անհատապես և թե բրիգադայի մեջ աշխատելու դեպքում, վոչ ուշ քան նրա ընդունվելու 7-րդ որը համաձայն կատարվող աշխատանքի վորակի և վոչ թե աշխատանք կատարող անձի վորակի:

Չի թույլատրվում բանվորի կատեգորիան վորոշել բրիգադայի հայեցողությամբ: Յեթե Վարչությունը 7 որվա ընթացքում չի վորոշել նրա կատեգորիան, այդ դեպքում մինչև բանվորի կատեգորիայի վորոշումը, բանվորը ստանալու յե վարձատրություն այն չափով, ինչ չափով նախկին աշխատավայրում ստացել ե:

§ 51.

Աշխատանքի հանձնումը և չափերը անպայմանորեն կատարվելու յեն բրիգադայի ներկայացուցչի մասնակ-

ցությամբ: Զավելու և հանձնելու համար գործադրված ժամանակամիջոցի մասին պետք է հիշատակել ստացական-հանձնողական արձանագրության մեջ և այդ ժամանակի համար Անդրհամարդչինը վճարելու յե մասնակցողին միջին աշխատավարձի չափով:

Հանձնման արձանագրությունը ստորագրվում է յերկու կողմերից էլ:

§ 52.

Կատարված աշխատանքի արձանագրված հաշվի պատճենը տրվելու յե բրիգադայի ներկայացուցչին տանձին իսկ պահանջի դեպքում:

Աշխատավարձի օրեկան տարիֆ-դրույքի 1-ին կարգի համար սահմանվում է՝

ա) Բանվորի համար 1 ռուբ. 72 կ. իսկ առաջին կարգի աշակերտների համար 1 ռուբ. 12 կ.: Աշխատավարձի բաշխումը կատարվում է հետևյալ տարիֆային ցանցով՝

| Բանվորների համար | | Աշակերտների համար | |
|---|---|---|---|
| կարգ | կոեֆ. | կարգ | կոեֆ. |
| 1 | 1,0 | 1 | 1,12 |
| 2 | 2 25 | 2 | 1,30 |
| 3 | 1,45 | 3 | 1,60 |
| 4 | 1,60 | 4 | 1,90 |
| 5 | 1.80 | | |
| 6 | 2,10 | | |
| 7 | 2,50 | | |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Աշակերտներն աշակերտական ցանցով տարիֆիկացիայի յեն յենթարկվում միայն 2 տարվա ուսման ընթացքում. սովորելու տևողությունը 3 տարի լինելու դեպ-



քում, վերջին տարում վճարումը կատարվելու յե ընդհանուր բանվորական ցանցի համաձայն, այն հաշվով, վորպեսզի վերջին կիսամյակում ստանա մի կարգով ցած այն արհեստի կարգից, վորով նա գրանցվելու յե դպրոցն ավարտելուց հետո, բայց վոչ պակաս այն աշխատավարձից, վորը ստացել է Տինուսում:

2. Բոլոր շենքերի և Վարչությունների աշխատող (ծառայողների համար) սահմանվում է ամսեկան աշխատավարձ պաշտոնական դրույքների ձևով:

§ 52.

Աշխատավարձը վճարվելու յե ամսեկան 3 անգամ, դեկադներով համաձայնություն գալով Բանկոմի հետ, ըստ վորում առաջին յերկու դեկադայի համար տրվելու յե ավանս, օրավարձի դրույքի հաշվով, իսկ 3-րդ դեկադայի աշխատավարձը վճարելիս փակելու յե վերջնական հաշիվն ամբողջ ամսի համար, համաձայն կատարած աշխատանքների:

Յեթե աշխատողի հանգստի օրը զուգադիպում է աշխատավարձ վճարելու օրվա նախօրյակին, այդ դեպքում նրանց աշխատավարձը պետք է տրվի հանգստյան օրվա նախօրյակին: Աշխատավարձը պետք է վճարել աշխատանքի ժամերին, և աշխատանքի վայրում, ամեն մեկին առանձին, անձամբ աշխատավարձի ցուցակներով:

Բրիգադներին, կոլեկտիվներին և արտադրական կոմմունաներին աշխատավարձ տրվում է կոլեկտիվ ձևով: Այդ ձևով վճարելը պետք է լինի աշխատողների ցանկությամբ և կամավոր կերպով, ամեն մեկի առանձին համաձայնությամբ: Անդրհամարդչինը պարտավոր

և ամեն դեպքում անհատական հաշվառում կատարել աշխատանքի և աշխատավարձի:

§ 53.

Անդրհամարդշինը պարտավոր է տրամադրել բանվորներին համապատասխան գործիքներ և շինանյութ, և սեփական գործիքների չունենալու պատճառով գործի չընդունելը արգելվում է: Յեթե բանվորը աշխատում է իր սեփական գործիքներով, Անդրհամարդշինը պարտավոր է, բացի աշխատավարձը վճարել նաև առանձնապես գործիքների մաշվելու համար դրամական փոխհատուցում: Փոխհատուցումը վճարվելու յե ամեն 3 ամիսը մեկ անգամ համաձայն կազմված ցուցակների:

## ԲՐԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՊՐԱՍՏՈՅՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

§ 54.

Սահմանված աշխատավարձով բանվորը պարտավոր է կատարել լավ վորակի աշխատանք, վատ վորակ աշխատանքը, վորը առաջացել է բանվորի մեղքով, նա պարտավոր է նորից վերաշինել առանց առանձին վարձի· կամ վարձատրել ցածր գներով համապատասխան աշխատանքների թերությունների:

Անդրհամարդշինից ստացված վատ գործիքներ, կամ շինանյութեր հայտնաբերելու դեպքում, վորի պատճառով կարող է գործը փչանալ կամ տուժել, բանվորն անմիջապես պետք է հայտնի Վարչությանը:

Վարչա-տեխնիկական անձինք, իրենց սխալ կարգադրությամբ յերբ պատճառ են դառնում անվորակ և վատ աշխատանք առաջանալուն, անձնապես նյութական պատասխանատվության են յենթարկվում պատճառած



վնասի համար, բացառությամբ այն դեպքերից, յերբ տեխնիկական անվտանգության պահպանման համար է տրված կարգադրությունը, կամ կապված է այն վորոշ վտանգի հետ:

Նման դեպքերում աշխատանքի այն մասը, վորն անվորակ կճանաչվի վարձատրվելու յեն սահմանված հատուկ գնացուցակներով:

Առանց Վարչության կարգադրության անվորակ աշխատանք կատարելու և շինանյութերը փչացնելու դեպքում, վնասները պահանջվելու յեն համաձայն տույժերի ցուցակներ:

Յեթե բանվորի հանցանքով փչացրած աշխատանքը նորից ոգտագործվում է ձեռնարկության կողմից, իբրև արժեքավոր աշխատանք այդպիսին վճարվելու յե իջեցրված գնահատությամբ, հակառակ դեպքում համաձայն ԳԿՀ-ի վորոշման:

Նյութի փչացնելու վնասը պահանջվում է և գանձվում է փչացնողից, սակայն այն վոչ ավել նրա տարիֆ-դրույքի 1/3-ից:

§ 55.

Բանվորի կամ բանվորների խմբի անփույթ վերաբերմունքի, տեխնիկական ներքին կանոնների խախտման, Վարչության կարգադրությունները չկատարելու հետևանքով առաջացած վնասներն և դիտավորյալ ձևով աշխատանքը չկատարելու համար, աշխատանքի վարձը չի վճարվում և հանցավորներին գործից հեռացնում են առանց լուծարքային նպաստի:

§ 56.

Աշխատավորը պարտավոր է անմիջապես հայտնել Վարչությանը և ցեխ-կոմին պրաստոյի դեպքում, բացի

այդ իրենից կախված բոլոր հնարավոր միջոցները պետք է գործ դնի և նախազգուշացնի Վարչությանը առաջ գալիք պրաստոյը կանխելու: Հակառակ դեպքում պրաստոյի համար չի վճարվում և բանվորը պետք է ենթարկվի պատասխանատվության համաձայն տույժերի ցուցակի:

§ 57.

Վարչությունը պարտավոր է միջոցներ ձեռք առնել պրաստոյները կանխելու, հակառակ դեպքում, յերբ անխուսափելի յեն, պարտավոր է բանվորներին փոխադրել ուրիշ աշխատանքի:

Վարչության պատճառով առաջացած պրաստոյների (յերբ անխուսափելի յեն կամ ժամանակին կարգադրություն չի արված)—համար հանցավորները յենթարկվում են պատասխանատվության, բացի այդ վճարում են իրենց անփութությունից առաջացած բոլոր վնասները:

§ 58.

Պրաստոյի դեպքում վճարվում է՝

ա) 3 օրից վոչ ավել պրաստոյի համար միջին աշխատավարձի չափով.

բ) 3 օրից ավել պրաստոյի դեպքում տարիֆային դրույքներով, հաշվելով պրաստոյը սկսվելու բոպեյից:

§ 59.

Վատ յեղանակներին (անձրև և այլ մթնոլորտային տեղումներ և յերևույթներ) յերբ բացօդյա աշխատանքը անհնար է լինում, Վարչությանն իրավունք է վերապահվում փոխադրել բանվորներին ծածկի տակ և տալ նրանց,—համաձայն իրենց վորակի աշխատանք և վճարել տվյալ աշխատանքի գնացուցակով, սակայն վոչ պակաս տարիֆային դրույքից:



փոխադրել ծածկի տակ և հանձնել այնպիսի աշխատանք, վորը չի համապատասխանում իրենց վորակին, և վճարել միջին աշխատավարձի հաշվով:

Ծածկի տակ աշխատանք տալը հնարավոր չլինելու դեպքում, Անդրհամարչինը վճարելու յե բանվորներին չաշխատած օրերի վարձը համաձայն տարիֆային դրույքի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Աշխատանքը շարունակելու անհնար լինելը վորոշում է Վարչությունը և բանկոմը, համապատասխան արձանագրությամբ:

## ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 60.

Պարգևատրվում են այն բոլոր բանվորները, վորոնք քանակական և վորակական ցուցանիշներով լրիվ կատարում են իրենց հանձնարարված աշխատանքի նորման:

Պարգևատրման չափը կախված է կատարած աշխատանքի քանակից, վորակից և տնտեսումից:

Պարգևատրման ֆակտորներն են հետևյալ ցուցանիշները՝

ա) Առանձին միավորներում շինանյութերի ծախսման մեջ տնտեսում մտցնելը.

բ) Պրաստոյների տոկոսի իջեցումը.

գ) Բրակի իջեցումը.

դ) Արտադրանքի վորակի լավացումը:

Ծանոթություն.—Անդրհամարգչինը պարտավոր է պարգևատրել լավ աշակերտներին գործնական և թեորետիկ առարկաների ու աշխատանքների առաջադիմության համար, արտադրության մեջ

աշխատելիս վորակի և քանակի ցուցանիշների լրիվ նորման կատարելու դեպքում լավ կարգապահության համար, գյուտարարության և արժեքավոր առաջարկների համար:

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

§ 61.

Անդրհամարդշինը պարտավոր է քննության առնել արտադրական խորհրդակցության և անհատ բանվորների առաջարկները 3 որվա ընթացքում և հայտնել առաջարկի հեղինակներին վորոշման հետևանքը:

Ռացիոնալացման նպատակով Անդրհամարդշինի հատկացրած 10000 ռ. պետք է վորոշված լինի, թե վոր գործարանին կամ շենքին վոր մասն է հատկացվելու, իսկ գործարանների և շենքերի մեջ նույնպես իրեն հատկացվածը բաշխվելու յե ըստ ցեխերի:

§ 62.

Անդրհամարդշինը պարտավոր է 10 որվա ընթացքում մշակել և համաձայնեցնել գործար—խմբկոմի հետ հարվածայինների և սոցմրցման մասնակիցների աշխատանքի հաշվառման ձևը, վորպեսզի հնարավոր լինի այդպիսի հաշվառումը կատարել 1931 թ. փետրվար ամսի 1—ից վոչ ուշ:

§ 63.

Գյուտարարների վորակը բարձրացնելու համար Վարչությունը պարտավոր է հիմնել և կահավորել մինչև մարտ ամիս գյուտարարների անկյուն, բացի այդ Վարչությունը պարտավոր է տեխնիկական և կազմակերպչական ոժանդակություն ցույց տալ գյուտարարներին:



## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԵՐԸ ՅԵՎ ՀԱՆԳԻՍՏԸ

§ 64.

Արտաժամյան աշխատանքներ և հանգստի որերին աշխատելը չի թույլատրվում:

Արտադրության անհրաժեշտ դեպքում, թույլ է տրվում արտաժամյա աշխատանք, սակայն նախորոք համաձայնություն կայացնել Անդրհամարդշինի և Միության միջև ստանալ Աշխժողկոմատի թույլատվություն այդ առթիվ:

Արտաժամյա աշխատանքը վարձատրվում է հետևյալ ձևով՝

ա) Աշխատողը ստանալու յե արտաժամյա աշխատանքի առաջին յերկու ժամերի համար ամեն մի ժամին տարիֆային դրույքի 1 ¼ չափով:

բ) Գործարքով աշխատողները արտաժամյա աշխատելու դեպքում ստանալու յեն՝ առաջին յերկու ժամերի համար ամեն մի ժամի համար 1¼ ժամվա իր տարիֆային դրույքը, իսկ հետևյալ ժամերի համար ամեն մի ժամին մեկ ու կես ժամվա իր տարիֆային դրույքի աշխատավարձի չափով:

Բացառիկ դեպքերում, յերբ աշխատավորը հնարավորություն չի ունենում իր հանգստի որը հանգստանալու, նրան թույլատրվում է առաջիկա 12 որից մեկում մի որ ավելի հանգստանալ:

Ծանոթություն.—Աշակերտներին վոչ մի դեպքում չի թույլատրվում արտաժամյա աշխատանքներ տալ և հանգստի որերը աշխատեցնել:

§ 65.

Չափավորված բանվորական որ է սահմանվում ըստ այն պայմանագրերին կցված պաշտոնների ցուցակների:

Անդրհամարդշինը պարտավոր ե մի ամսվա ընթացքում կազմել և համաձայնեցնել բաժնի հետ չչափավորված բանվորական ու ունեցող աշխատավորների վերաբերյալ աշխատանքի կանոնները:

§ 66.

Յերկու շաբաթվա արձակուրդի (12 բանվորական օր) հարցը, նոր ընդունված բանվորի կողմից կարող ե հարուցվել Անդրհամարդշինի առաջ, միայն 11 ամիս անընդհատ աշխատելուց հետո:

Բանվորական տարին հաշվելու յե տվյալ Անդրհամարդշինի մոտ 12 ամիս ընդունված օրից աշխատելով:

Յերկրորդ անգամ արձակուրդ ստանալու հարցը կարելի յե հարուցել, նախկին բանվորական տարում աշխատելուց հետո և 5 ու կես ամիս լրիվ տվյալ Անդրհամարդշինի մոտ աշխատանքը շարունակելուց հետո:

Արձակուրդը, վորպես որենք տրվում ե որացուցային տարվա սկզբին կամ վերջին, իսկ աշակերտներին տրվում ե անպայման ամառվա ամիսներում: Առանձին դեպքերում կարելի յե տալ նաև տարվա ընթացքում, յեթե աշխատանքի բնույթը թույլ ե տալիս արձակուրդ գնալու:

Ծանոթություն.—1. Այնպիսի արձակուրդները վոր Անդրհամարդշինը տալիս ե առանց աշխատավարձի պահպանման, նման դեպքերում աշխատանքների մեջ ընդհատում չի մտցվում, այլ մտցվում ե աշխատանքի ընդհանուր ստաժի մեջ հերթական արձակուրդի իրավունք ձեռք բերելու համար:

2. Յեթե Անդրհամարդշինը փոխադրում ե աշխատավորին ուրիշ աշխատավայրը կամ Աշխժող-



կոմատի կարգադրությամբ նա փոխադրվում ե այլ Անդրհամարդշինի մոտ աշխատելու, աշխատանքի ստաժը վորը արձակուրդի իրավունք ե տալիս չի ընդհատվում:

Անդրհամարդշինի կողմից աշխատանքից արձակվածները, կամ նրանց կամքով հեռացողները 11 ամսից պակաս աշխատած լինելու դեպքում ստանալու յեն արձակուրդի փոխհատուցում իրենց ստացած աշխատավարձի 4 տոկոսի չափով, տվյալ Անդրհամարդշինի մոտ իրենց աշխատած ամբողջ ժամանակի համար, սակայն այն հաշվով, վոր տրված գումարը չգերազանցի նրանց միջին աշխատավարձի 12 որվա վարձից:

Այն աշխատավորները, վորոնք յերկրորդ աշխատանքի տարում նույն Անդրհամարդշինի մոտ 5 ամիս աշխատել. հեռացվում են («Ա» «Բ» «Գ» կետերի 47-րդ հոդվածի Աշխօրենսգրքի) ինչպես և նրանք, վորոնք կկանչվեն զինվորական ծառայության, կամ կգործուղվեն սովորելու, ստանալու յեն արձակուրդի փոխարեն դրամական փոխհատուցում 12 որվա միջին աշխատավարձի չափով:

Այն աշխատավորները, վորոնք աշխատել են 5 ու կես ամիս և հեռացված են, բացի վերև հիշված պատճառներից այլ պատճառներով (ինչպես և իրենց կամքով հեռացողները) նաև նրանք, վորոնք 5 ամսից պակաս են աշխատել, անկախ հեռացման պատճառներից ստանալու յեն իբրև արձակուրդի փոխհատուցում ամեն մի աշխատած ամսի համար մի որվա վարձատրություն:

§ 67.

Անչափահասները նույն Անդրհամարդշինի մոտ 5 ½ ամիս աշխատելուց հետո ձեռք են բերում մեկ ամսվա

արձակուրդի իրավունք, ամբողջ տարվա համար. չօգտագործված արձակուրդի դիմաց անչափահասներին դրամական փոխհատուցում և տրվում նրանց վճարված ամբողջ աշխատավարձի 8 տոկոսի չափով:

Չափահաս դառնալու մոմենտից, յեթե նրանք հերթական արձակուրդը չեն ստացել, այդ դեպքում արձակուրդը տրվելու յե բացի սահմանված յերկուշաբաթվանը, նաև լրացուցիչ ամեն մի ծառայած ամսի համար ևս մեկական օր. հաշվելով այն մինչև չափահաս դառնալու օրը:

Ծանոթություն.—1. Չչափավորված բանվորական օր ունեցող աշխատավորներին տրվելու յե լրացուցիչ արձակուրդ, համաձայն սույն պայմանագրին կցված ցուցակի:

2. Յերկու տարի անընդհատ աշխատող բանվորները հաշվելով 1930 թ. նոյեմբերի 1-ից, վորոնք աշխատել են շինանյութ արտադրող ձեռնարկություններում, ստանալու յեն բացի օրենքով սահմանվածից, նաև լրացուցիչ արձակուրդ 3 բանվորական օր, կամ փոխհատուցում 3 օրվա աշխատավարձի չափով:

3. Այն բանվորները և տեխնիկական պերսոնալը, վորոնք լավագույն աշխատողներին արտադրության մեջ (հարվածայիններ և սոցմրցման մասնակցողներ) վորոնք յերկար ժամանակ աշխատել են տվյալ հիմնարկ-ձեռնարկություններում և լավ վորակի աշխատանք են կատարել, արտադրական խորհրդակցություններ արժեքավոր առաջարկներ են մտցրել կամ գյուտարարության մեջ աչքի յեն ընկել, խրախուսվելու յեն Վարչության կողմից, առաջին հերթին ուղարկվելու յեն տեխնիկ, ԲՈՒՀ-եր սովորելու, հանգստյան տներ, կուրորտները գործուղվելու յեն արտասահման վորակավորվելու, առաջին հերթին նրանք պետք ե ապահովեն դեֆիցիտային ապրանքներից և այլն:



4. Չափահասները և անչափահասները վորոնք աշխատում են վնասակար և ծանր գործերում, վորոնք նախատեսված են օրենքով (տրվելու յեն լրացուցիչ արձակուրդ յերկու շաբաթով):

§ 68.

Տեխնիկական պերսոնալի արձակուրդ գնալու կարգը սահմանվում է Վարչության կողմից, նախապես համաձայնության գալով գործարկոմի և ՃՏ-ին կից հետևյալ ձևով՝

ա) Չչափավորված բանվորական օր ունեցող ճարտարապետ-տեխնիկ աշխատավորների համար սահմանվում է տարեկան յերեք շաբաթից մինչև մեկ ամսյա արձակուրդ) յելնելով նրանց աշխատանքի ծանրաբեռնվածությունից ըստ սույնին կցված պաշտոնների ցուցակի):

§ 69.

1931 թ. արդֆինպլանով նախատեսված աշխատանքի պաշտպանության վարկի սահմաններում, Վարչությունը պարտավոր է կատարել տեխնիկական անվտանգության, սանիտարական աշխատանքի առողջապահության բոլոր ձեռնարկումները, համաձայն Աշխատեսչության և Վարչության միջև համաձայնեցրած և առաջարկված կարգով—Վարչությունը պարտավոր է նաև վոչ ուշ 1931 թ. սկզբից կառուցել բոլոր խոշոր և միջակ շինարարական օբեկտներին կից համապատասխան շենք ճաշարանների համար, բացի դրանից Վարչությունը պարտավորվում է շենքերին կից ունենալու դուշեր, լվացարաններ և այլն):

Ծանոթություն.— Վարչությունը պարտավոր է լվացարանների մոտ ունենալ օճառ, կամ այդպիսին բաժանել բանվորներին:

## § 70.

Վարչությունը պարտավոր է շին-աշխատանքների սկզբից շինարարության կից հիմնել բժշկական առաջին օգնության կայան, (առանձին շենքում) և կահավորել այդպիսին համապատասխան ինվենտարով: Բացի այդ ունենալ փոխադրական միջոց, ծանր դեպքերի ժամանակ վիրավորներին կամ հիվանդներին կայանից փոխադրելու համար:

Վարչությունը պարտավոր է մինչև 1–2 ամիս կազմակերպել բոլոր ցեխերում դեղատուփեր անհրաժեշտ դեղորայքով, հիվանդին շտապ բժշկական օգնության հասցնելու համար:

## § 71.

Աշխատանքները սկսելուն պես Անդրհամարդշինը պարտավոր է ապահովել յեկվոր և իրենց պահանջով այլ տեղերից յեկած բանվորներին կահավորված բնակարանով (հանրակացարան և այլն) վորոնք կահավորելու յեն սեղաններով, պահարաններով, մատրացներով, բարձերով, լվացարաններով: Ստեղծելու յե հնարավորություն պարբերաբար լվացվելու հատակը, լվանալ և ախտահանելու, (միջատների բազմանալը կանխելու համար) սանիտարական և առողջապահական բոլոր հարմարություններով, մեծ շինարարություններում, որ ապագա գործարանը և հարակից բնակելի շենքերը պետք է կառուցվեն, մնայուն բանվորների համար մինչև արդյունաբերության աշխատանքների ըսկսելը, բոլոր կառուցած բնակարանները պետք է տրամադրել կառուցող բանվորներին մինչև շինարարության ավարտելը:

Բնակելի շենքերի մի մասը պետք է հատկացնել



ընտանիքներով վորակյալ և դեֆիցիտային արհեստաների բանվորներին, և նրանց վորոնք յերկար ժամանակ կապված են տվյալ շինարարության հետ:

Բոլոր դեպքերում բնակարանները բաշխելիս, բացի զուտ ամառային ժամանակավոր բնակարաններից, վորոնցից և բարակներից կարող է սահմանվել բնակարանային վարձ և կոմունալ ծախսեր զբաղեցրած բնակարանների համար, համապատասխան աշխատավարձի չափի դիֆերենցիալ հարաբերությամբ համաձայն ՀԱՄԽ-ի և Համամութենական ԺՏԽ-ի 1929 թ. օգոստոսի 5–7 կարգադրության:

Աշակերտներին բնակարան տրամադրվում է ձրիաբար:

Անդրհամարդշինը և Պրոֆմիությունը պարտավոր են խրախուսել յերիտասարդ բանվորության ձեռնարկությունն օրինակելի ցուցադրական հանրակացարաններ և կոմունաներ կազմակերպելու խնդրում, Անդրհամարդշինը պարտավոր է առաջին հերթին տրամադրել նրանց կահավորված բնակարաններ, հոգալով կահավորման հետ կապված ծախքերը և այլն:

Բացի այդ Անդրհամարդշինը պարտավոր է 1931 թ. պահանջվող բնակելի շենքերի 20 տոկոսը կառուցել մշտական տիպի բնակարանների:

Ծանոթություն.—1. Անդրհամարդշինին պատկանող բնակարանների բաշխում կատարվելու յե Վարչության և գործարկոմ-բանկոմի փոխադարձ համաձայնությամբ ըստ վորում բնակարանները առաջին հերթին տրվելու յեն հարվածային բանվորներին, յերկար ժամանակ շինարարություններում աշխատողներին և նրանց, վորոնք ինքնամրացման կարգով աշխատելու յեն մինչև 5-ամյակի վերջը:

2. Եթե ամառային տիպի շենքեր են տրամադրվում բանվորներին բարակներ, վրաններ և չտաքացող շենքեր (կոմունալ ծախքեր և բնակարանի վարձ չի գանձվում նրանցից:

§ 72.

Անձնավորություններ, որոնք Անդրհամարդչինը պարտադրում է ապրել շինարարության և գործարանի սահմաններում, այդպիսիններին բնակարանը տրվում է ձրի, Անդրհամարդչինի հաշվին:

§ 73.

Իրենց կամքով հեռացվածները կամ ներքին կանոնների խախտման պատճառով հեռացվածները պարտավոր են 5 օրվա ընթացքում ազատել բնակարանը

Ծանոթություն.—Այն աշխատավորները, որոնց խնամքի տակ ապրում են անչափահասներ, կամ ծերացածներ, կարելի յե 5 օրվա փոխարեն թույլ տալ 15 օրից հետո ազատելու բնակարանը:

2. Սույն միջոցի կիրառումը չի վերաբերվում նրան, որոնց ընտանիքի կերակրողը դժբախտ պատահարներից մեռել են, նման դեպքերում թույլ է տրվում զբաղեցնել բնակարանը մինչև 3 ամիս:

§ 74.

Վարչությունը պարտավոր է բաց թողնել վարկ ........ ռուբ. բանջարանոցներ, խոզաբուծություն և կաթնատնտեսություն կազմակերպելու համար:

Շինարարության և արդյունաբերության մեջ աշխատող բանվոր-ծառայողներին արտահագուստ տրվելու յե համաձայն 1930 թ. հաստատված նորմաների և սույնին կցված լրացուցիչ ցուցակի:

Արտահագուստը ձեռնարկության սեփականու-



թյունն է և նույնիսկ մաշվելու դեպքում պետք է վերադարձվի:

Գործից հեռացվելու ժամանակ բանվորը պարտավոր է վերադարձնել արտահագուստը ձեռնարկությանը:

Մինչև հին արտահագուստը չվերադարձնել նորը չի տրվելու:

Արտահագուստ յուրացնողները յենթարկվում են պատասխանատվության և արժեքը գանձվելու յե յուրացնողից շուկայի գներով, այդ մասին առաջ յեկած վեճերը քննվելու յեն ԳԿՀ-ի միջոցով:

Մեծ շինարարություններում և գործարաններում Վարչությունը պարտավոր է ունենալ առանձին շենքեր արտահագուստների և գործիքների պահելու համար:

Անդրհամարդչինը պարտավոր է լվանալու տալ և կարկատել իր հաշվով արտահագուստները և փոխնամանները: Պարտավոր է նաև կազմակերպել փոխնամանների նորոգելու արհեստանոցներ:

Ծանոթություն.— Աշակերտները ստանալու յեն արտահագուստ չափահաս բանվորների հետ հավասար, այն արհեստների նորմայով, որի համար նրանք պատրաստվում են:

§ 76.

Գործարաններում կամ ձեռնարկություններում առաջացած դժբախտ պատահարներից մեռած բանվորների ընտանիքին Վարչությունը պարտավոր է տալ նպաստ, մեռածի միջին աշխատավարձի հաշվով, մեկ ամսվա համար, անկախ ապահովագրական գանձարկղի տված նպաստի:

Քաղաքներից դուրս գտնվող այն կառուցումներում և գործարաններում, որ բացակայում են հասարակա-

կան բաղնիքներ, Անդրհամարդշինը պարտավոր է հի-
նյալ շինարարության վրա գրաված աշխատավորներին ապահովել բաղնիքով, ընդ որում բաղնիքի օգտագործման պայմանները պետք է այնպես կարգավորել, վորպեսզի, աշխատավորի խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամները ևս հնարավորություն ունենան օգտվելու բաղնիքից:

Ծանոթություն.—1. Բոլոր աշակերտները և անչափահասները օգտվելու յեն կոմունալ ծառայություններից (բաղնիքից, լվացքատուն և այլն) ձրիաբար:

2. Յերիտասարդ բանվորների կենցաղը բարելավելու և ամառանոց ու լագեր ուղարկելու համար Անդրհամարդշինը պարտավոր է տարեկան հատկացնել 500 ռուբ.:

§ 78.

Այն դեպքերում, յերբ բանվորները հրաժարվում են Անդրհամարդշինի կողմից տրամադրված բնակարանում-հանրակացարանում ապրելուց, հանրակացարանի փոխարեն դրամական փոխհատուցում ստանալ չեն կարող:

Անդրհամարդշինի կողմից բանվորին բնակարան կամ հանրակացարան չհատկացնելու դեպքում, բանվորին Անդրհամարդշինի հաշվին վճարվում է բանվորի կողմից վարձած բնակարանի արժեքի 50 տոկոսի չափով: Շինարարության վայրից 2½ կիլոմետր հեռավորության վրա ապրող բանվորներին (վորոնք ապրում են իրենց բնակարաններում) այդպիսիներին բնակարանային վարձ չի տրվում:

Ծանոթություն.— Բանվորի հիվանդության դեպքում հանրակացարանում նրա տեղը պահվում է, մինչև հիվանդանոցից վերադառնալը:



Բնակարանի փոխհատուցում ստացող հարգելի պատճառով բանվորների բացակայության դեպքում (արձակուրդ, հիվանդություն, զինվորական ծառայության կանչվելը) շարունակվում է փոխհատուցում վճարել բացակայողին:

§ 79.

Անդրհամարդշինը պարտավոր է վճարել փաստացի ծախսը գնալ գալու համար բոլոր բանվորներին այն դեպքում, յեթե նրանք ապրում են իրենց աշխատավայրից 3 կիլոմետր և ավելի հեռավորության վրա:

§ 80.

500-ից և ավելի բանվորներ ունեցող մեծ ձեռնարկություններում և շենքերում Անդրհամրդշինը պարտավոր է իր հաշվով պահելու հատուկ աշխատակից ազատված բոլոր կողմնակի աշխատանքներից տեխնիկական անվտանգության, հսկողության համար, վորը պետք է լինի տեխնիկական կրթությամբ:

Սոցկենցաղային խմբակի ներկայացուցիչները տեղկոմի պահանջով կարիք յեղած ժամանակ ազատվելու յեն աշխատանքից աշխպաշտպանության, և տեխնիկական անվտանգության հարցերը քննելու համար: Ընդհանուր առմամբ վոչ ավելի 1 հոգուց ամսվա մեջ 3 որ: Այդ որերի համար Անդրհամարդշինը վճարելու յե ազատվածին իր միջին աշխատավարձի հաշվով:

## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՏԵՂԿՈՄԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՇՊԱՆՈՒՄԸ

§ 81.

Տվյալ ձեռնարկության մեջ միութենական աշխատանքներ կատարելու և միութենական մարմին պահ-

պանելու համար Անդրհամարդչինը պարտավոր է հատկացնել բանվոր-ծառայողներին վճարած ամբողջ աշխատավարձի 1 տոկոսի չափով և բանվորների մեջ կուլտկրթական աշխատանքներ տանելու համար հատկացնել 1 տոկոսի չափով ընդամենը՝ 2 տոկոսի չափով, ռոճիկները վճարելուց հետո, ոչ ուշ 3 օրից:

Ծանոթություն.— *Սույն պարագրաֆում թվված բոլոր մուծումները Անդրհամարդչինը պարտավոր է վճարել, մուծելով այն տեղկոմի ընթացիկ հաշվին կամ կանխիկ վճարելով նրան: Այդ գումարները տեղկոմի ներկայացուցչին վճարելուց, ամեն անգամ պետք է պահանջել նրանից լիազորագիր, ստորագրած տեղկոմի մյուս երկու անդամների կողմից և ստացողի ազգանունը ստորագրությամբ: Ձևը տեղկոմը կամ խմբկոմը ուղարկելու յեն Անդրհամարդչինին:*

§ 82.

Բացի թված ծախսերից, Անդրհամարդչինը տրամադրելու յե նաև առանց վարձի տեղկոմին մի սենյակ լրիվ կահավորված (գրասեղան, աթոռներ և այլն) վառելիքը, լուսավորությունը և հեռախոս (Բացի այդ [illegible] առնվազն ամիսը մի անգամ ընդհանուր ժողովներ հրավիրելու համար:

Յեթե տեղկոմի գրասենյակը գտնվում է (ձեռնարկություններից դուրս, Անդրհամարդչինը պարտավոր է վճարել տեղկոմի կողմից վարձված շենքի վարձը:

Բացի այդ թե շենքում և թե հանրակացարաններում Անդրհամարդչինը պարտավոր է տրամադրել տեղկոմին հատուկ շենք, կահավորված, լուսավորությամբ և վառելիքով, մասսայական և խմբակային պարապմունքների համար: Շենքի նորոգությունը պարտավոր է կատարել Անդրհամարդչինը պահանջելու դեպքում:



Վարձով վերցրած հանրակացարանների հետ Անդրհամարդչինը վարձատրելու յե նաև կարմիր անկյան սենյակ:

§ 83.

Արհբյուրոյի, կուսակցական, կոոպերատիվ և այլ պրոֆ-հասարակական մարմինների տեղկոմից հրավիրված համագումարների, կոնֆերանսների, պլենումների, լիազորական ժողովներին մասնակցելու համար ընտրված բոլոր պատգամավորներին աշխատավարձ նրանց տեվողության ամբողջ ժամանակամիջոցում վճարելու յե Անդրհամարդչինի կողմից, ընտրված պատգամավորների միջին աշխատավարձի հաշվով:

Բրիգադայի մեջ ընտրված բանվորներին (Անդրհամարդչինի և Միության փոխհամաձայնությամբ) նույնպես վճարելու յե միջին աշխատավարձի հաշվով, բրիգադայի մեջ աշխատելու ժամանակամիջոցի համար:

§ 84.

Բոլոր խոշոր շինարարական կետերում կազմակերպել և կահավորել ֆիզ-կուլտ պլոշչադներ:

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏ-ՏԵԽՆԻԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

§ 85.

Հավաքական պայմանագրի սույն մասը տարածվում է ճարտ. տեխնիկ. բոլոր տեսակի պաշտոնյաների վրա. Ճ. Տ. աշխատավորների տարիֆային տեղեկատուում նախատեսնված բոլոր պաշտոնների աշխատակիցների վրա, նայեվ սույն պայմանագրին կցված ցուցակում նախատեսնված պաշտոնների վրա:

Ծանոթություն.—Վարչա-տեխնիկական ղեկավարող պաշտոնների համար (աշխղեկ և բարձր պաշտոններ) թեկնածուներ է առաջարկում միությունը, ըստ փորձում նրանց ընդունելու վերջնական վորոշումը թողնվում է Անդրհամարդչինին:

§ 86.

Ճարտ. տեխնիկ աշխատավորներին աշխատանքից հեռացնելու դեպքում, համաձայն Աշխօրենսգրքի 47-րդ հոդվածի «Ա» և «Բ» կետերի, պետք է նախազգուշացնել գրավոր ձևով մի ամիս առաջ, իրենց ցանկությամբ հեռանալու դեպքում ճարտ. տեխնիկ աշխատավորները պարտավոր են մի ամիս առաջ հայտնել վարչությանը գրավոր ձևով. միաժամանակ վարչությանն այդ մասին պետք է հայտնի Աշխժողկոմատին:

Ծանոթություն.—Այն դեպքում, երբ հանձնարարված աշխատանքները կիսավարտ են կամ դեռ չեն հանձնված Անդրհամարդչինը կարող է ՃՏՍ-ի համաձայնությամբ հեռացումը հետաձգել մինչև գործի վերջնական ավարտումը, տալով աշխատավորին առանձին վարձատրություն.

§ 87.

Ճարտարապետա-տեխնիկական աշխատանքների վարձատրության չափը սահմանվում է կառուցողների կենտկոմի 1930 թ. հրատարակված տարիֆային տեղեկատույով.

| Կարգ | Կոէֆ. | Կարգ | Կոէֆ |
|---|---|---|---|
| 1 | 1,0 | 9 | 9,00 |
| 2 | 1,10 | 10 | 2,25 |
| 3 | 2,20 | 11 | 2,40 |
| 4 | 1,30 | 12 | 2,60 |
| 5 | 1,40 | 13 | 2,85 |
| 6 | 1,55 | 14 | 3,15 |
| 7 | 1,70 | 15 | 3,50 |
| 8 | 1,05 | 16 | 4,00 |



ինժ. տեխնիկ. աշխատավորների առաջին կարգի ամսեկան ռոճիկը սահմանվում է 125 ռուբլի:

Կարգերի բաժանումը ըստ պաշտոնների կատարում է Անդրհամարդչինը:

Կարգերի բաշխումից առաջացած կոնֆլիկտները քննում է ԳԿՀ-ն հրավիրելով ճարտ. տեխնիկ. սեկցիայի ներկայացուցիչներին:

Այն պաշտոնները, որը չի նախատեսված կառուցողների Կենտկոմի կազմած տարիֆ-տեղեկատույով, այս կամ այն ճարտարապետա-տեխնիկի համար, փորձում է ԳԿՀ-ն համապատասխան տվյալ անձի աշխատանքի բնույթը, դասելով նրան տարիֆ-տեղեկատույով նախատեսված պաշտոններից մեկի կարգում:

§ 80.

Տեխնիկական, արտադրական և տնտեսական նվաճումների համար ճարտ. տեխ. աշխատավորը պարգևատրվելու է աշխպաշտպանության խորհրդի 1929 թ. մեկն հունվարի հրահանգի համաձայն:

§ 89.

Ճարտ. տեխնիկ. աշխատավորների ընդունելությունները, տեղափոխել և աշխատանքից հեռացնելը կատարում է Վարչությունը, հայտնելով այդ մասին գործարկոմին և ՃՏՍ-ին:

Վարչությունը պարտավոր է ՃՏՍ-ին մասնակից դարձնել ճարտ. տեխնիկական ուժերին ռացիոնալ կերպով դասավորելու այս կամ այն պաշտոնում:

ՃՏՍ-ն իրեն հերթին պարտավորվում է աջակցել Անդրհամարդչինին ճարտ. տեխնիկ. կադրերը համապատասխան ձևով օգտագործելու համար:

Վարչությունը, գործարկոմը և ՃՏՍ-ն պարտավոր

են պարբերաբար պայքարել բանուժի և ճարտ. տեխնիկների հոսունության դեմ:

§ 90.

Ճարտ. տեխնիկների արձակուրդների դասավորումը սահմանում է վարչությունը վերջնականապես միության հետ համաձայնության գալուց հետո՝ հետեվյալ ձեվով՝ չափավորված բանվորական օր ունեցող.

ա) Ոչ նորմայով աշխատող ճարտ. տեխնիկներին միության և Անդրհամարդչինի համաձայնությամբ տրվում յե, համաձայն արձակուրդ գնացողի բեռնվածության 3 շաբաթից մինչև մեկ ամիս հաշվելով նրա մեջ իր հերթական արձակուրդ յեվս:

§ 91.

ՃՏՍ-ի աշխատանքներում նորմալ պայմաններ ստեղծելու համար վարչությունը մինչեվ փետրվարը պարտավոր է իրեն հաշվին տրամադրել նրանց աշխատանքի սենյակ, կահավորված լուսավորությամբ և վառելիքով, իրենց վրա վերցնելով նայեվ այդ սենյակի պահպանելու և պարբերաբար մաքրելու ծախքերը:

Ճարտ. տեխնիկ. աշխատավորներին թույլատրվում է իրենց ազատ ժամերին օգտվել արտադրական գիտական փորձերով, արխիվներից, և լաբորատորիագիտական փորձերով՝ արխիվներից, թանգարաններից և լաբորատորիաներից, այն պայմանով, վոր իրենց նորմալ աշխատանքը չտուժեն:

§ 92.

Ճարտ. տեխնիկների վորակի բարձրացման համար Անդրհամարդչինը պարտավոր է՝

ա) Գործուղել նրանց լրացուցիչ կիրսով վերա-



վորակավորվել ու համապատասխան դասընթացքներ, տեղական ՃՏՍ-ի հետ համաձայնության գալով վերապատրաստման ուղարկվելիք թեկնածուների թվի և անձնավորությունների մասին:

բ) Իր հաշվին 12 հոգու գործուղել միության շինարարական զանազան վայրերը, գիտական եքսկուրսիաներ կատարելու համար:

գ) Իր հաշվին գործուղել ճարտ. տեխնիկներին գիտական տեխնիկական համագումարներ և խորհրդակցություններին մասնակցելու, բոլոր նման գործուղումների ժամանակ ուղարկվածի միջին աշխատավարձը պահպանվում է:

դ) Կազմակերպել տեխնիկական գրադարաններ, և գոյություն ունեցածները նոր տեխնիկական գրքերով լրացնելով, վորպեսզի ճարտ. տեխնիկ. օգտվեն այդ գրադարանից:

Ճարտ. տեխնիկների մեջ պրոֆ-աշխատանք տանելու համար ձեռնարկությունը օրական 2 ժամով պետք է ազատի այն մասնագետին, վորին ՃՏՍ-ն ցույց կտա:

Համաձայն սույն պայմանագրին կցված ցուցակի, Անդրհամարդչինը պարտավոր է տալ ինժ. տեխնիկներին և լաբորատորներին արտահագուստներ:

ՃՏՍ-ն միության հետ միասին պարտավոր է աշխատանքներ տանել ճարտ. տեխնիկներին ամրացնելու աշխատանքներին մինչեվ շինարարության ավարտը, կամ 5-ամյակի վերջը:

Անդրհամարդչինը պարտավոր է հատկացնել համապատասխան գումար ՃՏՍ-ին ռացիոնալացման միջոցներ ստեղծելու ծախքերի համար:

Բացի այդ համապատասխան միջոցներ և հատկացնում ճարտ. տեխնիկ. աշխատավորներին պարգեվատրելու, յեթե նրանց կողմից ռացիոնալացման արժեքավոր առաջարկներ է յեղել:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՈԴՎԱԾՆԵՐ․—

§ 93․

Անդրհամարդչինը պարտավոր ե մշակել ներքին կանոնադրություն յելնելով Աշխժողկոմատի կողմից հաստատված օրինակելի նախագծից և յելնելով տեղական պայմաններից, մտցնել համապատասխան լրացումներ, վորից հետո համաձայնեցնել միության հետ: Ներքին կարգապահությամբ նախատեսնված պայմանները կյանքում կիրառելու յեն Աշխժողկոմատի կողմից հաստատելուց հետո:

§ 94․

Սույն պայմանագրի հետ կապված բոլոր բանսակի ծախքերը կատարվելու յեն Անդրհամարդչինի հաշվին, բացի դրանից Անդրհամարդչինը պարտավոր ե սույն պայմանագրից փոքրիկ գրքույկների ձևով տպագրել... օրինակ ռուսերեն լեզվով, 400 օրինակ հայերեն լեզվով, բոլոր բանվորներին ձրի բաժանելու համար:

գ) Բազմացնել գնացուցակները բրոշյուրների ձևով և բաժանել ամեն մի բրիգադայի ներկայացուցչի համար մեկական օրինակ:

դ) Վճարել պայմանագրի կնքելու և գրանցելու բոլոր ծախքերը:

§ 95․

Սույն պայմանագիրը ստորագրման ժամանակ Անդրհամարդչինի ձեռնարկություններում աշխատում եյին բանվորները 120 հոգի, ծառայողներ՝ 25 հոգի. ընդամենը՝ 125 հոգի:

Կառուցողների Միության կենտվարչության
ներկայացուցիչ՝ Ա․ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անդրհամարդչինի Հայաստանի բաժանմունքի
կառավարիչ՝ Կ․ ՄԻՍԿԱՐՅԱՆ

16-ն հունվարի 31 թ․



## Ց Ո Ւ Ց Ա Կ

Չափավորված աշխատանքի ու ունեցող աշխատակիցների (կետ 67 և 68)․

1․ Աշխատանքի ղեկավարներ և օգնականները
2․ Գլխավոր ճարտարապետները և նրանց օգնականները
3․ Արտադրության վրա գրավված բոլոր ճարտարապետ-տեխնիկները
4․ Բոլոր բաժինների և յենթաբաժնի վարիչները և նրանց օգնականները
5․ Գլխավոր հաշվապահները և նրանց օգնականները
6․ Հաշվապահները
7․ Տնտեսագետները, վիճակագիրները
8․ Պահեստների վարիչները և պահեստապետները
9․ Եքսպեդիտորները
10․ Արտելշչիկները (շրջիկ գանձապահները)
11․ Շոֆֆերները և նրանց օգնականները
12․ Ֆուրգոնշչիկները և կառապանները
13․ Իրավախորհրդատուները
14․ Գործերի վարիչները կամ նրանց փոխարինող քարտուղարները
15․ Տանսպորտի վարիչը
16․ Վարչության հրահանգիչները

Ստորագրություններ՝

## ԳՈՒԴՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

1) Բոլոր բանվորները, վորոնք աշխատում են գուդրոնի և տոփալոի աշխատանքների վրա:

## ՑՈՒՑԱԿ

*ԱՅՆ ԱՐՀԵՍՏԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ՎՈՐՈՆՔ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ, ՅԵՎ ՎՈՐՈՆՑ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԱՇՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՒՄ Է ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՀԵՏԵՎՅԱԼ ՉԱՓՈՎ (կետ .......)*

1. *Վորմնադիր քարտաշ* . . . . . . . . . 1%
2. *Վորմնադիրների* . . . . . . . . . . 1/3%
3. *Քարտաշներին* . . . . . . . . . . 1,0%
4. *Սվաղչիներին* . . . . . . . . . . 1,4%
5. *Ներկարարներին* . . . . . . . . . 1,4%
6. *Թիթեղագործներին* . . . . . . . . 1/2%
7. *Ասֆալտագործներին* . . . . . . . . 1/4%
8. *Քարհանքի քար կտրող բանվորներին* . . 1 1/2%
9. *Շիրեն ջարդող բանվորներին* . . . . . . 1/4%
10. *Ապակի կտրողներին* . . . . . . . . . 1%
11. *Խպարիչներին* . . . . . . . . . . . 1%
12. *Փականագործներին և ջրմուղանցկացնող փականագործներին* . . . . . . . . 1 1/2%
13. *Դարբիններին* . . . . . . . . . 1 1/2%
14. *Հյուսներին* . . . . . . . . . . 1%
15. *Ատաղձագործներին* . . . . . . . 1 1/2%
16. *Վառարանագործներին* . . . . . . 1 1/4%
17. *Ատաղձագործն. և հյուսներին* . . . . 1 1/4%



18. *Ատաղձագործն. մեխանիկացիայի ենթարկված արհեստանոցներում աշխատելու դեպքում* . . . . . . . . . . . . 1%
19. *Արմատուրշչիկներին* . . . . . . . .

Կողմերի ստորագրությունը՝

## ՑՈՒՑԱԿ

Այն աշխատակիցների, վորոնք ոգտվում են լրացուցիչ արձակուրդ ստանալու իրավունքից (կետ № 90)

1. *Դիրեկտոր տարեկան մեկ ամսվա արձակուրդ.*
2. *Նրա ոգնականը նույնպես.*
3. *Արտադրական բաժնի վարիչը մեկ ամիս.*
4. *Գլխավոր ճարտարապետ՝ մեկ ամիս.*
5. *Բաժնի վարիչները և ենթաբաժնի վարիչները մեկ ամիս.*
6. *Գլխավոր հաշվապահները և նրանց տեղակալները՝ մեկ ամիս.*
7. *Հաշվապահներին 18 բանվորական որ (արտադրության մեջ աշխատող հաշվապահներին մեկ ամիս.*
8. *Աշխղեկներին՝ մեկ ամիս.*
9. *Աշխղեկների ոգնականներին մեկ ամիս.*
10. *Արտադրության մեջ անմիջականորեն զբաղված ճարտ. տեխնիկ.՝ մեկ ամիս.*
11. *Մեքենագրուհիներին 18 բանվորական որ.*
12. *Գանձապետ-էքսպեդիտորներին՝ 18 բանվ. որ.*
13. *Շոֆֆերներին, արտակարգիչներին և նրանց ոգնականներին՝ մեկ ամիս.*

14. Կառապաններին՝ 18 բանվորական որ.
15. Տնտեսագետներին, վիճակագիրներին՝ մեկ ամիս.
16. Արտելշչիկներին (չրջիկ պանձպահներին) 18 բանվորական որ.
17. Եքսպեդիտորներին՝ 18 բանվորական որ.
18. Գործերի վարիչների՝ 18 բանվորական որ.
19. Իրավախորհրդներին՝ մեկ ամիս.
20. Տանապետներին և բրիգադիրներին՝ 18 բանվ. որ.
21. Պատասխանատու հրահանգիչ՝ մեկ ամիս.
22. Տրանսպորտի վարիչ՝ 18 բանվ. որ.
23. Տարիֆիկատոր՝ 18 բանվորական որ.

Կողմերի ստորագրությունը.—

## ՑՈՒՑԱԿ

Վտանգավոր աշխատանքներում աշխատող բանվոր-ծառայողների, վորոնց տրվում է լրացուցիչ արձակուրդ.
(Համաքական պայմանագրի . . . կետ)

1. ԹՈՒՆԵԼՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ.—

1. Ծակողներ (բուրիլշչիկի).
2. Զաբոյշչիկի.
3. Կրեպիլշչիկի.
4. Զապալյշչիկներ.
5. Սակաչշչիկներ (սակաչշչիկներ).
6. Թունելներում աշխատող այլ բանվորներ.

3. Գաջի և կրի արդյունաբերությունը.—

1. վրա աշխատող բանվորներ.
2. Բեռնող և պատարկող բանվորներ.
3. Պահեստներում աշխատող բանվորներ.

4. Գաջի գործարանի բանվորներին.



4. Գրանիտի արդյունաբերությունը.—

1. Պերփերատորների վրա աշխատող բանվորներ.
2. Մեխանիկացիայի չենթակված ստանոկների վրա աշխատող բանվորներ.
( կարող).
3. Մեքենայական գործիքներով բրուչատկաները աշխատող բանվորներ.
4. Մեքենայացման չենթարկված արհեստանոցներում աշխատող բանվորներ.

5. Ցեմենտի արդյունաբերության մեջ աշխատող բանվորներին.—

1. Աղացող բանվորներ.
2. Պատվող վառարան. վրա այրող բանվորներ.
3. Բեռնող բանվորներ, վորոնք մշտապես զբաղված են չախտայի և գյոզնեյգեր վառարանների վրա, կրաքար:
4. Գոֆման բեռլինցի վառարաններում դասավորող բանվորներ.

5. Ցեմենտի արդյունաբերությունը.—

1. Շախտինսկի վառարաններ բեռնող և թափող բանվորներ.
2. Կեսոնի աշխատանքների վրա զբաղված բանվորներ.
3. Բանվորներ, վորոնք զբաղված են ներկարարային աշխատանքները (մետաղի, փայտի կամ շինանյութերի վրա)և յեթե գործադրում են ավելցովի:

7. Գուդրոնաան աշխատանքներ.—

1. Բոլոր բանվորները, վորոնք կատարում են գուդրոնի յեվ ասֆալտի աշխատանքները:

Կողմերի ստորագրություններ.—

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1931 թ. 12 մարտի կայացավ Կառուցողների Կենտվարչության տարիֆբաժնի վարիչ Արմենակ Հարուվարչության տարիֆբաժնի վարիչ Արմենակ Հարությունյանի և մյուս կողմից Անդրհամարդշինի Աշխատանքի Եկոնոմ բաժնի վարիչ Մուրադ Մուրադյանի միջև՝ կնքեցինք հետևյալ համաձայնությունը 1931 թ. հավաքական պայմանագրի § 81, 52, 20 կետերի փոփոխման մասին:

1. § 20. Նախատեսնված կադրերի պատրաստման համար 40.000 ռուբ. փոխել, դարձնել վճարվելիք աշխատավարձի 3 տոկոսի չափով, կադրերի պատրաստման համար:

2. § 52. Բանվոր–ծառայողների աշխատավարձը, որը նախատեսնված է ամսական բաժանել 10 օրը մեկ անգամ (ըստ դեկադների) փոխել, դարձնել աշխատավարձի վճարումն ամսական 2 անգամ, այսինքն 15 օրը մեկ անգամ, առաջին կիսամյակին 15–18-ին, յերկրորդ կիսամյակի 1—3-ը:

3. § 81. Նախատեսնված ուղկոմի և կուլտ–աշխատանքների համար 2,25 տոկոսների հատկացումը փոխել, դարձնելով յերկու տոկոս (մեկ ուղկոմական և մեկ տոկոս կուլտ–կրթական):

Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում հավաքական պայմանագրի կնքման օրից:

Կառուցողների կենտվարչության տարիֆ–բաժնի վարիչ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անդրհամարդշինի Աշխատանքի եկոնոմիկ բաժնի վարիչ՝ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀՀ Ազգային գրադարան
NL0926918

1
2803